Արձանագրություն N 2

ՀՊՏՀ -ԵՄԾՁԲ-25/2
ծածկագրով երկփուլ մրցույթի նախավորակավորման
ընթացակարգի հայտերի բացման և գնահատման գնահատող հանձնաժողովի նիստը

28 նոյեմբեր 2025 թ
ժամը 12:00

ք. Երևան

Մասնակցում էին հանձնաժողովի նախագահ՝ Սամվել Հովհաննիսյան

անդամներ ՝ ***Աղաջանյան Հարություն***
Արմեն Օհանյան

Քարտուղար՝ Նորայր Վարդանյանը

ՀՊՏՀ -ԵՄԾՁԲ-25/2
ծածկագրով գնման ընթացակրգի նախավորակավորման նիստի բացման մասին

Գնման ընթացակարգի ընտրության հիմնավորում՝
« Գնումների մասին» ՀՀ օրենքի 19-րդ և 24 հոդվածներ

Հրավերը հրապարակելու ամսաթիվը ՝
Նախավորակավորման ընթացակարգի հայտարարությունը հրապարակվել է 05.11.2025թ
Հրավերում կատարված փոփոխությունները՝
Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին չի ներկայացվել որևէ հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի վերաբերյալ:
Հայտերը բացվել են 19.11.2025 ք. Երևան Նալբանդյան 128, գլխավոր մասնաշենք, 5-րդ հարկ, 501 սենյակում Ժամը 12:00 ին

Մասնակցության հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

1. «Վեքթո» ՍՊԸ (ք Երևան Անտառային 166 . հեռ. +(374)077-26-92-89 info@vecto.digital):
2. «Ի վորկս» ՍՊԸ (Գ Լուսավորիչ 9 . հեռ. +(374) 91-488-384 , info@e-works.am
3. «Սմարթսոֆ» ՍՊԸ (Հակոբ Հակոբյան 3 . հեռ. +(374) 015-55-22-55 , info@esmartsoft.am
4. Լիլիթ Թադևոսյան Ա/Ձ (Երևան 9-րդ զանգված 16/21. հեռ. +(374)55-35-95-55, lilit.tadevosyan@digilab.am

Հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին

- « Վեքթո » ՍՊԸ ի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան
- « Ի վորկս » ՍՊԸ ի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան
- « Սմարթսոֆ» ՍՊԸ ի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան
- Լիլիթ Թադևոսյան Ա/Ձ (Երևան 9-րդ զանգված 16/21. հեռ. +(374)55-35-95-55, lilit.tadevosyan@digilab.am

Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտում ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

- « Վեքթ» ՍՊԸ ի կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը Վեքթո առկա են:Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և երկու օրինակ պատճենից և համապատասխանում են նախավորակավորման հայտարարությամբ սահմանված պահանջներին :

- «Ի վորկս » ՍՊԸ ի կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը առկա են:Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և երկու օրինակ պատճենից և համապատասխանում են նախավորակավորման հայտարարությամբ սահմանված պահանջներին :

- « Սմարթսոֆ » ՍՊԸ ի կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը առկա են:Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և երկու օրինակ պատճենից և համապատասխանում են նախավորակավորման հայտարարությամբ սահմանված պահանջներին :

- Լիլիթ Թադևոսյան Ա/Ձ ի կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը առկա են:Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և երկու օրինակ պատճենից և համապատասխանում են նախավորակավորման հայտարարությամբ սահմանված պահանջներին :

Հաշվի առնելով գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց ՀՊՏՀ -ԵՄԾՁԲ-25/2 ծածկագրով ընթացակարգի նախավորակավորված մասնակիցների ցանկը ստորև ներկայացված աղյուսակի

	Նախառրակավորված մասնակցի անվանում	Հասցե հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
1	« Վեքթ» ՍՊԸ	ք Երևան Անտառային 166 . +(374)077-26-92-89	info@vecto.digital
2	«Ի վորկս » ՍՊԸ	Գ Լուսավորիչ 9 +(374) 91-488-384	info@e-works.am
3	« Սմարթսոֆ » ՍՊԸ	Հակոբ Հակոբյան 3 +(374) 015-55-22-55	info@esmartsoft.am
4	« Սմարթսոֆ » ՍՊԸ	Երևան 9-րդ զանգված 16/21 +(374)55-35-95-55	lilit.tadevosyan@digilab.am

Հիմք ընդունելով նախավորակավորման ընթացակարգի արդյունքները և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-ն որոշմամբ հաստատված գնումների գործնթացի կազմակերպման կարգի 14-րդ կետի պահանջներով գնահատող հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակներում որոշեց

1. Հաստատել ՀՊՏՀ -ԵՄԾՁԲ-25/2 ծածկագրով երկփուլ մրցույթի 1-ին փուլի հրավերի տեքստը (կցվում է)
2. ՀՊՏՀ -ԵՄԾՁԲ-25/2 ծածկագրով երկփուլ մրցույթի 1-ին փուլի հրավերը տրամադրել բոլոր նախառրակավորված մասնակիցներին էլեկտրոնային փոստի միջոցով միաժամանակյա ծանուցմամբ:

3. Առաջին փուլի հայտը որը չի պարունակում գնային առաջարկ , ներառում է մասնակցի առաջարկները հրավերով ներկայացվածգնման առարկայի կատարողականի կամ գործառույթային (ֆունկցիոնալ) նկարագրերի վերաբերյալ (նկարագրերի առաջարկ))
4. 2025թ դեկտեմբերի 8-ին ժամը 12:00ին Հայաստանի Պետական Տնտեսագիտական համալսարան ՊՈԱԿԻ որը գտնվում է Նալբանդյան 128 5- րդ հարկ 501 սենյակ հասցեում կազմակերպել միաժամանակյա բանակցություններ նախաորակավորված բոլոր մասնակիցների հետ:

Գնահատող հանձնաժողովը որոշեց

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անուն ազգանունները և ստորագրությունները և Հանձնաժողովի կողմից իրականացված գնահատման արդյունքում (գնահատման թերթիկները կցվում են)

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ Սամվել Հովհաննիսյան _____

Անդամ Հարություն Աղաջանյան _____

Արմեն Օհանյան _____

քարտուղար՝ Նորայր Վարդանյան _____

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան » ՊՈԱԿ ՀՊՏՀ վեբ կայքի պատրաստման ծառայության» ձեռքբերման ՀՊՏՀ -ԵՄԾՁԲ-25/2 ծածկագրով երկփուլ մրցույթի 1-ին փուլի հրավեր

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան » ՊՈԱԿ-ը, որը գտնվում է ք. Երևան Նալբանդյան 128 հասցեում հիմք ընդունելով ՀՊՏՀ -ԵՄԾՁԲ-25/2 ծածկագրով երկփուլ մրցույթի նախարակավորման ընթացակարգի արդյունքները և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ N 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի VIII-րդ բաժնի պահանջներով, հրավիրում է ձեզ մասնակցել ՀՊՏՀ -ԵՄԾՁԲ-25/2 ծածկագրով երկփուլ մրցույթի առաջին փուլին:

Առաջին փուլի հայտերը , որը չի պարունակում գնային առաջարկ,ներառում է մասնակցի առաջարկները հրավերով ներկայացված գնման առարկայի կատարողականի կամ գործառույթային (ֆունկցիոնալ) նկարագրերի վերաբերյալ (նկարագրերի առաջարկ))

Հայտերը անհրաժեշտ է ներկայացնել ոչ ուշ քան 2025թ դեկտեմբերի 8-ին ժամը 12:00:

Մասնակիցը առաջին փուլի հայտը ներկայացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարին հասցեագրված թղթային կամ էլեկտրոնային գրությամբ մինչև առաջին փուլի հայտերը ներկայացնելու համար հրավերով նախատեսված ժամկետի ավարտը:

Մասնակիցը նկարագրերի առաջարկի հիմնավորման նպատակով առաջին փուլի հայտով կարող է ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր, տեղեկություններ, եզրակացություններ և այլ նյութեր:

Տեղեկացնում ենք նաև 2025թ դեկտեմբերի 11-ին ժամը 12:00 ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան » ՊՈԱԿ-ը, որը գտնվում է ք. Երևան Նալբանդյան 128 հասցեում տեղի կունենա միաժամանակյա բանակցություններ նախարակավորված բոլոր մասնակիցների հետ : Բանակցությունների արդյունքում կազմվում է գրավոր արձանագրություն,որը ստորագրում են բանակցությունների մասնակիցները: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության մասին է :

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող Նորայր Վարդանյանին:

Հեռախոս 010 593 483

Էլ. փոստ gnumner.asue@mail.ru

Պատվիրատու «Հայաստանիպետականտնտեսագիտականհամալսարան» ՊՈԱԿ

ՀՊՏՀ վեբ կայքի պատրաստման ծառայության ձեռքբերման տեխնիկական առաջադրանք

ԵՐԿՓՈՒԼ ՄՐՑՈՒՅԹԻ ՏԵԽՆԻԿԱՆԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՈԹՅՈՒՆ

1. Նախաորակավորված մասնակիցները բանակցությունների (առաջին փուլի) ընթացքում պետք է մշակեն և ներկայացնեն մանրամասն տեխնիկական բնութագիր (ՏԲ), <u>ՀԱՎԵԼՎԱԾ 1</u> , որը պետք է ներառի.
   - Կայքի ընդհանուր կառուցվածքի, մոդուլների, ֆունկցիոնալ հնարավորությունների, կիրառվող տեխնոլոգիական լուծումների և անվտանգության մեխանիզմների նկարագրությունը,
   - Կայքի ադմինիստրատիվ կառավարման համակարգի հնարավորությունների ներկայացումը,
   - Կայքի մոդուլների և բաժինների կառուցվածքը՝ հիմնված ՀՊՏՀ պահանջների և ստորաբաժանումների ցանկի վրա,
   - Կայքի ինտերֆեյսի նախնական դիզայնի նախագծեր:
2. Վերջնական/հիմնական տեխնիկական բնութագրի պահանջներ

Տեխնիկական բնութագիրը պետք է ապահովի ՀՊՏՀ նոր կայքի նախագծման, զարգացման և գործարկման ամբողջ գործընթացի ամբողջական և գործնական նկարագրություն, որը պետք է ներառի հետևյալ բաղադրիչները.

ա. Պահանջների հավաքագրում և վերլուծություն

- Իրականացնել առանձին հանդիպումներ և հարցազրույցներ ՀՊՏՀ ղեկավար կազմի, SS բաժնի և այլ համապատասխան ստորաբաժանումների հետ՝ խնդիրները վերհանելու և կարիքների ամբողջական պատկերը ձևավորելու նպատակով:
- Պատրաստել ամփոփագիր ՀՊՏՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների (ֆակուլտետներ, ամբիոններ, կենտրոններ, վարչական բաժիններ) կայքում ներկայացված լինելու պահանջների վերաբերյալ:

բ. Ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ պահանջների մանրամասնեցում Տեխնիկական բնութագիրը պետք է ներառի.

- Կայքի բովանդակային կառուցվածքը (site map)՝ բաժինների, ենթաբաժինների, գլխավոր էջի կառուցվածքի և նավիգացիայի տրամաբանության նկարագրությամբ,
- Ֆունկցիոնալ պահանջների ամբողջական նկարագրություն՝ ներառյալ դասախոսների անձնական դասատախտակների գրանցում, դասացուցակների ինտերակտիվ ներկայացում, առցանց դասախոսությունների կազմակերպում, հայտարարությունների համակարգ, ներբեռնելի փաստաթղթեր և այլն,
- Համակարգի մուտքի և գրանցման պահանջներ,
- Ծանուցումների ուղարկման գործառույթ,
- Ադմինիստրատիվ վահանակի պահանջվող հնարավորություններ,
- Օգտագործման հարմարավետության և բազմալեզու աջակցության ապահովում,
- Հոսթինգի և տեղեկատվական անվտանգության պահանջներ,
- Ենթակառուցվածքային ինտեգրացիաներ:

գ. Շուկայի ուսումնասիրություն և արդի լուծումների կիրառում

- Տեխնիկական բնութագիրը պետք է կազմված լինի՝ հիմնված ժամանակակից լավագույն պրակտիկաների վրա,
- Ներկայացվեն համաշխարհային կրթական հաստատությունների կայքերի օրինակներ՝ որպես բենչմարկ,
- Առաջարկվեն ճկուն և արդյունավետ տեխնոլոգիական լուծումներ, որոնք կաշխատեն առաջիկա տարիներին՝ անկախ տեխնոլոգիաների փոփոխություններից:

դ. Կարգավորող և իրավական պահանջների պահպանում

- Տեխնիկական բնութագիրը պետք է լիովին համապատասխանի ՀՀ գործող օրենսդրությանը, միջազգային ստանդարտներին և ոլորտային նորմատիվ պահանջներին:

ե. Որակի ապահովման մեխանիզմներ

- Տեխնիկական բնութագրում պետք է ներառվեն դրույթներ՝
- Որակի երաշխիքների ապահովման վերաբերյալ,
- Երաշխիքային սպասարկման պարտավորությունների վերաբերյալ,
- Կայքի ընդունման փուլերի և թեստավորման կարգի վերաբերյալ:
- ՏԲ-ում պետք է ներառվի ճկունության դրույթ, որը հնարավորություն կտա տեխնոլոգիական կատարելագործման՝ առանց մրցույթի հիմնական տրամաբանությունը խաթարելու:

զ. Արդյունքների ներկայացում և հանձնում

- Մասնակիցը պարտավոր է ներկայացնել.
- Ամբողջական և վերջնական տեխնիկական բնութագիրը (PDF և խմբագրվող տարբերակ),
- Բովանդակային կառուցվածքի դիագրամ (wireframe կամ sitemap chart),
- Բովանդակային բլոկների նախնական դիզայնի առաջարկներ,
- Տեխնիկական բնութագրի ներկայացում և քննարկում հանձնաժողովի անդամների հետ՝ վերջնական հաստատման նպատակով:
-
- Տեխնիկական բնութագիր (ՏԲ) – ՀՊՏՀ պաշտոնական կայքի նախագծման, մշակման և գործարկման համար

ա. Ընդհանուր նկարագրություն

- Կայքը պետք է դառնա ՀՊՏՀ պաշտոնական թվային հարթակը՝ ապահովելով ուսումնական, գիտական և վարչական գործունեության ամբողջական ներկայացում, տեղեկատվության մատչելի տարածում, ինչպես նաև ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակիցների համար նախատեսված ծառայությունների մատչելիություն:

բ. Պահանջների հավաքագրում և վերլուծություն

- Իրականացնել հարցազրույցներ և հանդիպումներ ՀՊՏՀ ղեկավար կազմի, SS բաժնի և այլ ստորաբաժանումների հետ:
- Ապահովել բոլոր ֆակուլտետների, ամբիոնների, կենտրոնների և վարչական ստորաբաժանումների պահանջների ամփոփ նկարագրություն:

գ. Կայքի ֆունկցիոնալ պահանջներ

- Կառուցվածքային բաղադրիչներ
- Կայքը պետք է ունենա առնվազն հետևյալ բաժինները.
- Ֆակուլտետներ (6)
- Ամբիոններ (20+)
- Մասնաճյուղեր (Եղեգնաձոր, Գյումրի)

- Ուսումնական, գիտական և վարչական ստորաբաժանումներ (25+)

Յուրաքանչյուր միավորի էջում անհրաժեշտ է ներկայացնել.

- Անվանումը, ղեկավար կազմը, կոնտակտային տվյալները
- Գործունեությունը
- Փաստաթղթեր, հայտարարություններ, լուսանկարներ

Ֆունկցիոնալություն

Կայքը պետք է ապահովի.

- Դասացուցակների և քննագրաֆիկների ինտերակտիվ ներկայացում (ցուցադրում, որոնում, զտում, ներբեռնում)
- Տվյալների ներմուծման պարզ համակարգ
- Ծանուցումների համակարգ (փոստ, SMS, ներքին ծանուցումներ)
-
- Օգտատերերի մուտքի բազմամակարդակ համակարգ (ուսանող, դասախոս, վարչական աշխատակից)
- Անվտանգ նույնականացում
- Առցանց դասախոսությունների և վեբինարների ինտեգրում (Zoom, YouTube Live և այլն)
- Գիտական և բլոգային հրապարակումների ենթակառուցվածք
- Փաստաթղթերի և ձևանմուշների մատչելի պահոց՝ որոնելի համակարգով
- Ընդունելության առանձին ենթակայք/էջ՝ առցանց դիմումների հնարավորությամբ
- Հայերեն և անգլերեն/ռուսերեն բազմալեզու աջակցություն

դ. Տեխնիկական պահանջներ

- Մոբայլ դիզայն (Responsive Design)
- Տվյալների պահպանում և անվտանգություն՝ պաշտպանություն DDoS, SQL Injection, Brute-force հարձակումներից
- Համապատասխանություն միջազգային ստանդարտներին (օրինակ, ISO 27001)
- Վերլուծությունների ինտեգրում (Google Analytics կամ համարժեք)
- SEO օպտիմիզացիա
- Բազմաբնույթ օգտատերերի և իրավասությունների կառավարման համակարգ

ե. Դիզայնի և օգտագործողի ինտերֆեյսի պահանջներ

- Ժամանակակից, պրոֆեսիոնալ UI/UX
- Համալսարանի գունային սխեմային և բրենդինգն համապատասխանեցում
- Հեշտ նավիգացիա՝ ըստ կառուցվածքային և թեմատիկ բաժինների

զ. Այլ պահանջներ

- Կազմակերպությունը պարտավոր է.
- Մշակել մանրամասն դիզայնի և ճարտարապետական նախագիծ
- Իրականացնել աշխատակիցների վերապատրաստում կայքի կառավարման համար
- Տրամադրել առնվազն 24 ամիս տեխնիկական աջակցություն և սպասարկում

3. Աշխատանքների ժամկետներ

- Նախաորակավորված մասնակիցների կողմից ներկայացվող նախնական տեխնիկական բնութագրերի մշակման տևողությունը չպետք է գերազանցի 30 օրացույցային օրը:
- Կայքի մշակման, փորձարկման և տեղադրման ընդհանուր տևողությունը՝ մինչև 150 օրացույցային օր՝ պայմանագիրը համաձայնագրով ուժի մեջ մտնելու օրվանից հաշված:

Հավելված N 1

« » 20 թ. կնքված

ՀՊՏՀ -ԵՄԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	**Ծառայության***	
	Անվանումը	Հակիրճ նկարագիրը
1	**ՀՊՏՀ վեբ կայքի պատրաստում**	

_____ _____

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ.